գաւորութիւնս թէ Ազգն Հռոմոց զայս ինչ գործեալ են։

Թվին ՌՃԶ Մարտի ԻԹ Չատիկ եւ Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Յեկեղեցիս մեր էաք. անձրև էր մեղմագոյն և զերեկոյի ասմաւուրն կարդացի։

Եւ Բշիս (30 Մարտ) ևս ոչ էր բաց և անձրև էր և ոչ ոք գնաց ի գերեզմանեն։

Դշի օրս Ապրիլ ամիս։ Երեկոյիս վաճառականքն արևելեան պատիւ արարին Աստուածատուր վարդապետին. ի տեղն էաք երեկոյիս։

Եշի օրս (2 Ապրէլ) կրկին Տաճկունքն ե նաւ ուղարկեցին յօգնականութիւն գնացելոցն։

Ուրբաթս (3 Ապրէլ) լուսին նոր էր, որ ըստ բառի Տաճկաց Ըռէճէպ ասի, առաջի նամազ։ Եւ աւուրքս վէզիրն ի պալատ թագաւորին. որք կային յառաջակայք թագաւորին ե Զ արքն ի դուրս հանել ետ անարգանօք և ոչ պատուով որպէս օրէն էր, և ճանապարհ նոցա պատիւ էր մեծութեան և իշխանութեան, սակս վասն բանի Հռոմոցն՝ թէ նոքա վասն նոցա բան են խօսեցեալ թէ Զուր արար վէզիրն զայն գործ, և պատրիարգութիւն Հռոմոցն այնպէս ամայի մնաց մինչև ցայժմ և ոչ ոք եդին յաթոռն։

Եւ աւուրքս հացածախքն կորեկ խառնեալ ի ցորեանն՝ ապա հաց հանէին, զի և գարին ևս ի Կ ըստակն ել, զի ցորեան ոչ եկն վասն հողմոցն, որք ելեալ հողմն ոչ երեր զցորեանն ի սահմանաց Սեաւ Ծովէն։

Կիրակի Ե-իս Կարմիր և Նոր անուանի։ Օրս ելին ի գերեզմանեն։

Բշիս (6 Ապրէլ) քեռիս եկաւ ի գիւղէն։ Եւ Բշիս զմուղթասիպն փոխեաց և եդ հին մեծ աղա մի, որոյ անուն Շապան աղա ասի։